H. PALAKACHIAN, Directeur - Rédacteur
de la Revue Hébdomad. „MÉGHOU„
171, Rue Kabristan, Péra, CONSTANT/PLE

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Թուրքիա՝ տարեկան 250, վեցամսեայ 125 գր.
Եւրոպա՝ — 60 ֆրանք.
Ամերիկա՝ — 3 Տօլար.

مغو

صاحب و مدير مسئولى هوونان پالاقاشيان
استانبول بك اوغلى قبرستان سوقاق نومرو ۱۷۱

Արտօնատէր, խմբագիր եւ Պատասխ. Տնօրէն՝
Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ
ԿՊՈԼԻՍ, Բերա, Գապրիսական փողոց, թիւ 171

Ա. ՏԱՐԻ
Թիւ 11
1927
ՕԳՈՍՏ . 11
Հատը 5 դրուշ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ՝
Տողը 10 դրուշ.
Չտպուած գրութիւնք չեն վերադարձուիր։
Հատը 5 դրուշ.

Կը հրատարակուի ՀԻՆԳՇԱԲԹԻ օրերը

Կարդացէք «ՄԵՂՈՒ»ի ներքին էջերուն մէջ

ԵՐԵՔ ՀՐԱՑԱՆԱԿԻՐՆԵՐԸ

Դրակները խնամով պահեցէք. յառաջիկայի գիրքն ունենալու համար։

ՔԱՂ. ԺՈՂՈՎ ՈՒՆԻ՞ՆՔ ԹԷ ՈՉ

Ժամանակ ազգօգուտ թերթի մէջ հետեւեալը կարդացինք Կիր. օր։

«Սոյգ աղբիւրէ կը լսենք թէ Արթիւր էֆ. Մաղաքեան, որ ներկայ Քաղ. Ժողովին անդամակցութեան կոչուած էր՝ ինքնօրէն կերպով որ եւ է կարգադրութիւն չընելոր պայմանաւ, դարձեալ սկսած է, իր վաղեմի սովորութեան համեմատ, ինքնաբերաբար որոշումներ տալ եւ գործադրել զանոնք, եւ Քաղ. Ժողովի միւս անդամները դնել կատարուած ըլլցած իրողութիւններու առջեւ։»

Չը զարմացանք այս տողերը կարդալով։ Այսպէս ըլլալիքը մեզ համար վաղուց յայտնի էր, եւ մենք ներկայ Քաղաք. Ժողովոյ ընտրութենէն անմիջապէս յետոյ, «ՄԵՂՈՒ»ի 6 դ թիւով (30 Յունիս), *Սիաղ սիաղի վրայ* վերնագրեալ յօդուածի մը մէջ, ըսինք եւ բացատրեցինք թէ, Ընդհ. Ժողովը սխալ մը գործեց՝ Արթիւր էֆ. Մաղաքեանը Քաղ. Ժողովոյ անդամ ընտրելով, քանի որ փորձուած էր իր նախորդ պատասխանատուութեան մէջ, իր առած կարգ մը սխալ քայլերով։ Ըսինք նաեւ թէ, «Քաղ. Ժողովոյ անդամ ընտրուիլը չէր բաւեր, այս Ժողովն ալ իրեն ատենապետ կ'ընտրէ՞ փորձուած մը»։ Գոնէ յիշէին իմաստունին առածը որ կ'ըսէ. Փորձեալը կրկին փորձել յիմարութիւն է։

Եւ կ'եզրակացնէինք. «Այս ի՞նչ անենկարագիր ազգ եղանք մենք»։

Անհաւա՛սիկ մեր դիտողութիւնները կ'արդարանան դժբաղդաբար, եւ ա՛յսքան շուտ։

Բայց այս չէ մեր ըսելիքն այս անգամ։

Մենք այս առթիւ կ'ուզենք հարցնել միայն եւ գիտնալ թէ, Քաղաք. Ժողով ունի՞նք թէ ո՛չ։ Եթէ չունինք, թո՛ղ այդ բացէ ի բաց յայտարարուի, եւ Ընդհ. Ժողովն ալ շուտով գումարուելով, թո՛ղ Քաղաք. Ժողով ընտրուի։ Իսկ եթէ ունինք, մենք չենք կրնար ըմբռնել թէ, երբ Ժողով մը իրապէս գոյութիւն ունի, ի՞նչպէս անոր Ատենապետը կը համարձակի առոչինչ նկատել զանիկայ եւ ինքզինքը ժողով համարելով, ինքն իրեն որոշումներ տալ ու գործադրել։ Եւ Ժողովն ալ ի՞նչ տեսակ Ժողով է, իր արժանապատուութիւնն ո՛ր տեղերը կ'իջնէ, երբ պատրաստ որոշումներ կը պարտադրուին իրեն եւ ինքն ալ գլուխ կը ծռէ այդ կատարուած իրողութիւններու առջեւ, փոխանակ մերժելու եւ չեղեալ համարելու զանոնք իբրեւ ապօրէն։ Եթէ Ատենապետն է որ խնդիրները պիտի որոշէ հնահաճօրէն, այլ ետ ինչո՞ւ համար է Քաղաք. Ժողովը։ Իր գոյութեան իրաւունքն ինչո՞վ կ'արդարանայ. ինքը կա՞յ թէ՛ չկայ։ Տան տէ՞րն է թէ՛ պարզ խրտուիլակ։ Հասկընա՛նք, գիտնա՛նք։

Եւ աւելին կայ։ Արթիւր էֆ. Մաղաքեան ո՛չ միայն առանց ժողովի որոշումներ կուտայ, այլ զանոնք նաեւ կը գործադրէ եղեր։ Ուրեմն Ս. Պատրիարքը ի՞նչ կը գործէ։ Ըստ օրինի, Պատրիարքն է գործադիր պատասխանեայն։ Ժողովներուն որոշումները ան կը գործադրէ։ Եթէ իրմէ դուրս ուրիշ մը ն է որ որոշումներ պիտի գործադրէ, իր պատասխանին պարտականութիւնն ո՞ւր կը մնայ, եւ ի՞նչ բանի համար Պատրիարք է ինքնք։ Այս ալ հասկնանք։

Վերջապէս, գործերն երեւի տակաւ պիտի ստանան այնպիսի երեւոյթ մը, որ ամէն մարդ պիտի սկսի իրաւամբ հարցնել թէ, Քաղաք. Ժողով ունի՞նք թէ ո՛չ։

Քիչ մըն ալ, եւ անա՛ եբեւի պիտի ստիպուինք հարցնել թէ Պատրիարք ունի՞նք թէ ո՛չ: Կը փափագինք որ չը ստիպուինք այս հարցումն ալ ընել վերջ ի վերջոյ կամ շուտով, որովհետեւ դեռ շատ կանուխ է:

Յ. Գ. Փ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԲԵՐԱՑԻ ԷՍԱԵԱՆ վարժարանին համար՝ Թաղ Խորհուրդը կազմեց Հոգաբարձութիւն մը որուն կ'անդամակցին Տեարք Տոք. Անտոէ Վահրամ, Մկրտիչ Իւթիւճեան և Գր. Սարաֆեան:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ վարժարանին 200 ոսկի արժողութեամբ վառարաններ նուիրած է ծանօթ վաճառական Յովհ. էֆ. Փափազեան, որ ասկէ առաջ ալ ի նպաստ որբերուն նուիրած էր իր սեփական մէկ տունը Վոսփորի մէջ:

ՀԱՅԿԱԿԱՆ մեծ Մատենարան մը կը հիմնուի Բարիզի մէջ: Այս նպատակին համար, Բարեգործականի Նախագահը 300, 000 ֆրանք վճարելով՝ վեց սենեակնոց մեծ յարկաբաժին մը գնած և Բարեգործականին նուիրած է Թրոքատէրոյի կողմը այն չէնքին մէջ, ուր Պ. Սերովբէ Սվաճեան յարկաբաժին մ'ալ յատկացուցած էր Բարեգործականին: Տիկին Փասէկա (ծնեալ Հօլաս) սոյն Մատենարանին կը նուիրէ իր հօր՝ Հօլասի՝ ճոխ Մատենարանը: Բարեգործականի Նախագահը, որ ստանձնած է Մատենարանի ներքին կահաւորումը ամբողջութեամբ, նուիրած է նաև Գահիրէի մէջ ունեցած իր հարուստ Մատենարանը, որ պիտի ամփոփուի Salle Nubar անուանով առանձին սրահի մը մէջ: Սոյն Հայկական Մատենարանը պիտի փոխադրուին նաև Փորթուգալ Միքայէլ Փաշայի Պոլսոյ, Մատթէոս Խերեանի Փառուայի ճոխ Մատենարանները, նոյնպէս Բարիզէն հայրենակից մը կը նուիրէ իր հարուստ Գրադարանը:

ՅԷՐԻԳԻԻԼԻ մէջ Թաղ. Խորհրդոյ ընտրութիւն կը կատարուի վաղը: Ստեփան էֆ. Կուրտիկեան, որուն անունն եւս դրուած է ընտրելիներու եռապատիկ ցանկին մէջ, իր բազմաբաղ վիճակին պատճառով կը խնդրէ Յէրիգիւղի յարգելի ազգայիններէն որ քուէ չը տրուի իր անունին:

ԻՄԱԿԻԻՍԱՐԻ երեք թաղերու Ազգասիրական մարմինը հաշուետուութենէ խուսափած ըլլալով, Տնտես. Խորհուրդը որոշեց խնդրել Թաղ. Ժողովէն՝ տնօրինութիւն մ'ընել այդ Մարմնոյ մասին:

ԲՈՂՈՔԱԿԱՆ Հայոց Կէտիկ փաշայի մէջ ունեցած վարժարանը, որ երկու տարիէ ի վեր փակ կը մնար, պիտի վերաբացուի փութով, արտօնութեամբ Կրթական գործավարութեան: Հիմնագիր նշանակուած է Վեր. Ս. Պ. Մանուկեան, որ նոր Հոգաբարձութիւն մը պիտի կազմէ, եւ սա՝ իր կարգին՝ պիտի ձեռնարկէ հարկ հարկ եղած կարգադրութեանց, Սեպտ. ին բանալու համար վարժարանը: Այս նախակրթարան առ այժմ պիտի ունենայ Տարրական և Միջին կարգերը միայն:

ԿԵԴՐ. ՎԱՐԺԱՐԱՆԸ դժբաղդութիւնը ունեցաւ կորսնցնելու իր Դեր-Տնօրէնն և Ուսուցիչը Տիար Գրիգոր Յովակիմեանը, որուն յուղարկաւորութիւնը վայելուչ հանդիսութեամբ կատարուեցաւ Շբ. օր Իւսկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ, եւ մարմինն ամփոփուեցաւ տեղւոյն գերեզմանատունը:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ. — Հայաստանի երաժշտագէտներէն Պ. Սպէրիդոն Մէլիքեան կը զբաղի ձայնագրելու ժողովրդական այն երգերն, որոնք օր է օր բերնէ բերան կ'ապաւաղին կամ կ'անհետանան: Պ. Մելիքեան կը պատրաստուի շրջիլ Արագածի կողմերն և ուրիշ տեղեր, հոս բնակող Սասունցիներու երգերը հաւաքելու և ձայնագրելու համար: Այս նպատակով մասնաւոր ձայնագիր (ֆօնոկրաֆ) բերել տուած է Բարիզէն:

ԿԱԼԿԱԹԱՅԻ մէջ Մայիս 14 ին մեռեր է տեղւոյն Հայերէն Յար. Ստեփանեան, 66 տարեկան: Նոր Զուղայեցի էր և շատ հմտեստ գիրքէ մը հասած է նիւթական փառաւոր գիրքի, տիրացած ըլլալով միլիոններու և կալուածներու:

ԿԵՍԱՐԻՈՅ Առաջն. Տիզապահ Տ. Սերովբէ Ա.ԲՆՆ. առաջարկած է Ազգ. Վարչութեան՝ Մելքոնեան և նման հաստատութիւններ փոխադրել Կեսարիոյ Երկսեռ որբերն: Ազգ, Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը փափագ յայտնած է որ սոյն որբուհիներէն ութը Հիւանդանոց ղրկուին, հոն հիւանդապահութեան դասընթացքին հետեւելու համար:

ԲԵՐԱՑԻ կալուածոց Հոգաբարձութեան կանոնագիրը Քաղաք. Ժողովոյ մէջ քննուած և անփոփոխ կիրարկութիւնը որոշուած է. Հետեւաբար կալուածոցն ըստ առաջնոյն Վարչութեան կողմանէ պիտի ընտրուի և անոր համարատու պիտի ըլլայ: Թաղ. Խորհուրդը լոկ ներկայացուցիչ մը պիտի ունենայ նոյն Հոգաբարձութեան մէջ:

ՏՕՔ. ԻՇԼԷՄԷՃԵԱՆ էֆ. հրաժարած է Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան անդամակցութենէ:

Տ. ՍԱՐԳԻՍ ԵՊՍ. հրաժարած է Կէտիկ Փաշայի Ընար. Ժողովոյ նախագահի պաշտօնէն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ Համալսարանի Թանգարանին կողմանէ պեղումներ կը կատարուին Ելարի մէջ: Առաջին մասն աւարտած է: Պեղուած են երկու գերեզմանաթումբեր, որոնք քարի հին շրջանին կը պատկանին: Հասկցուած է որ այդ շրջանին՝ մասնաւոր դիակնակիզարաններ կան եղեր:

ՍՏԱՅԱՆՔ

Նիու Եorf հրատարակուող «Հայաստանի Կոչնակ» Շաբաթաթերթի Յուլիս 23 ի թիւը, ճոխ բովանդակութեամբ եւ մաքուր տպագրութեամբ: Հասցէ.

The «Gotchnag», 331Fourth av.
NewYork, N. Y.

Աղեքսանտրիոյ Թեմական ժողովի 35 րդ նստի Ատենագրութիւնը, որ ի մէջ այլոց կը պարունակէ «Ամբաստանութիւն Եգիպտոսի Առաջնորդ Թորգոմ Ա.ր.իպ. Գուշակեանի դէմ»: Մեր կարծիքը կը վերապահենք, ապասելով լսել միւս կողմին ալ բացատրութիւնները, լուսաբանուելու և սխալ դատաստան չընելու համար:

«Բուժանիք» *Առողջապահական, Գիտական և Ընկերային ամսագիրի Բ. տարեշրջանի Թիւ 1ը (Յուլիս): Խմբագիրներն են՝ բուժիչներ Վ. Թորգոմեան, Պ. Քօլօլեան, Ե. Մինասեան, Լ. Գրիգորեան, նաեւ Պ. Կ. Ց. Բաժանեղինն է 30 ֆրանք: Հասցէ.*

L. Krikorian, 126, Faub. St. Denis.
Parls (Xe).

«Խարսոց» *Ամենայն Հայոց Երգիծաբերթի Յուլիս 31 ի Թիւը: Տար. բաժանեղինն է 30 ֆրանք: Հասցէ.*

M. Takimdjian. 33, Rue Pixérécourt,
Paris (20 e).

Մշակ Ազգ. Քաղաք. և Գրական Լրագրի 151—156 Թիւերը: Կը հրատարակուի Գշ. և Ուր. օրերը: Տարեկան բաժանեղինն է 3 տալար: Հասցէ.

P. O, Box 1176. Fresno, Calif.
(U. S. A.)

ԻՆՉ ԲԱՆԻ ՄԷՋ ԿԸ ԴՏՆԷՔ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Եօթը զաւակներու մայր եմ, ամուսինը՝ պարզ գործաւորի մը, որուն աշխատած օրերու վարձքերովը կ'ապրուինք, և այս պատճառաւ կը պատահի երբեմն որ օրուան հացով մտահոգուինք: Այսուհանդերձ, երջանիկ կը զգամ ինքզինքս ընտանեկան փոքրիկ բոյնիս մէջ, զաւակներս մեծցնելով Աստուծոյ վախով, նաև ուրիշներու անիրաւութիւն ընելու երկիւղով, պարկեշտ անհատներ ընելով զանոնք, աշխատութեան սէրը ներշնչելով անոնց, արթուն հսկելով որ չարեր չի մտնեն տունէն ներս, և վերջապէս յոյս ունենալով որ ուղիղ ճամբու մէջ պիտի տեսնեմ զաւակներս: Ահա՛, կը կարծեմ, ճշմարիտ երջանկութիւնը:

ԱՆԱՆՈՒՆ

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՕԴԱՅԻՆ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ

1. ՕԴԱՊԱՐԻԿԻ ՄԷՋ

Դէպ ի վե՛ր, աւելի վե՛ր, երկինք երնել և ուռենալ յուզիչ տպաւորութիւնը թէ գուցէ հոն հասնիս ... դաւալգլոր փառաւոր ամպուտով մը։

Երբ կը մտնես արձակ օդապարիկին մէջ եւ գլխերով ցերեկով կը սրանաս առանց գիտնալու թէ ո՞ւր կ'երթաս, հոգմակոծ, բախիդն բարերաստիկ դիպուածին անձնատուր, ճակատագիրդ պսակելու գեղեցիկ անհոգութեամբ, մտածելով թէ պիտի կրնաս մեղմիւ իջնել աշխարհի ամենասիրուն մէկ անկիւնը, քաշել զորձիքն ամփոփող չուանը և զեռինը ոտք դնել, մարդոց մէջ, որոնք զքեզ պիտի ընդունին իբրև ամպերէն իջնող հրեշտակ մը՝ գեղեցիկ բաներ բերելու համար իրենց, ազնուագոյն զգացում մը կ'ըմբռչխնես. կը կարծենք թէ, երկիրը թողով, կը թռթափենք հոգերն, կնճիռներն, ֆիզիքական և բարոյական թշուառութիւններն. կարճ խօսքով, թռի՛չք մը՝ դէպ յԱրքայս թիւն։

Զքեզ վեր բռնող այս փոքրիկ նաւակը, որ խաղի կ'ելնէ հողին անհարթութեանց հետ, բլուրներն ի վեր բարձրանալով, դաշտակտիններն իջնելով, ամէնէն հաճելին է փոխադրական գործիքներու. ո՛չ մէկ աղմուկ կը խռովէ երաղը. մինչև իսկ չես զգար թէ կը յառաջանաս, ոչինչ ունենալով շուրջդ իբր բաղդատութեան եզր։ Ներքևդ, տեսիլներ խիստ փափկանկար։

Մերթ ընդ մերթ, կը զգաս թրթռուն ձայն մը, զանգակ մը, տարտամ շչուկ մը մը, արդիւնք անբացատրելի հնչականութեան մը։ Բայց, աւելի յաճախ, բացարձակ լռութիւնն է որ կը տիրէ, լռութիւն որուն չես հանդիպիր ուրիշ ոչ մի տեղ։ Կատարեալ հանդիսատ է այս։ Օդանաւուն եզրն մինակդ նստած, անհուն առանձնութեան գիրկն ես, աշխարհներու Արարչին առջեւ։ Ցուրտէն կը դողդղաս, սոսկումէն ելս, խե՛ղճ մարդկային արարած, զազիզիզուն, խիստ յանդուգն, չես զգացած երբէք այսպիսի լքում։

Այն ատեն կը զգուես պզտիկ կատուն, կամ պզտիկ շունը, կամ թռչնիկը, զոր չատ օդաչուներ և մանաւանդ օդաչուուհիներ իրենց հետ կ'առնեն, ունենալու համար կեանքի մերձաւորութիւնը։ Կը խօսիս հետը, և ձայնդ արտակարգ թրթռումի մը ունի։ Եթէ օգնաւէն դուրս արձակես թռչունը, թէև իր տարրին մէջ կը գտնուի այն, վախ կը զգայ և չուտով կուգայ թառիլ եզերքը։ Արտին ալեկոծ, իր թեւերուն տարողութենէն չատ վեր, չատ հեռու կը գտնէ ինքզինքը։ Յաճախ կատուն կը քսմնի, կը խռովի, կը տագնապի, ոտքերուն վրայ կը բարձրանայ՝ տեսնելու համար, տնաբեկ կը մլաւէ անլուր ձայնով մը։

* * *

2. ՕԴԱՁՈՒԻՆ ՄԷՋ

Թէև միեւնոյն մթնոցին մէջ է որ կը նաւարկենք, տպաւորութիւնը խիստ տարբեր է օդաչուին մէջ։ Ուրիշ մտածումներ կը պաշարեն զմեզ. մեր հոգեկան և ջղային վիճակը փոփոխուած է խիստ զգալիօրէն։ Նախ, ինքզինքդ կը զգաս նստարանին ամուր առասանուած. անկարելի մը կապուած է քեզի։ Նաւաղիրը իր յանձնառութեանց վրայ միայն կը խորհի. մերթ ընդ մերթ քեզի նայելով կը ծ՛ծաղի, պաշտպանի կերպարանքով մը, բայց չի փորձեր խօսիլ։ Շարժիչ գործին կը դրդրդի, կը տաքցնէ. տարտ չէք զգար։

Երբ հողէն կը բաժնուիք, ձեր սիրտը կը կծկի քիչ մը. մոլորակ է որ կը լքես, երկիրդ, տարրդ, երկրային երկոտանիի բնակոնն վիճակդ։ Օդաչուին ծայրօրուիր կը զգաս. կ'ուզղուիս։ Դաւալգլոր անկո՛ւմ մը արդեօք...։ Գուցէ. նաւուղիղը կրնայ ընել այդ բանը։

Մեծ թռչուն մը մեզի կը բաղխի. ամպ մը զմեզ կը շրջապատէ. զանգակատունները, անտառները, գետերը կը շփոթուին։ Վե՛ր, վե՛ր կը բարձրանանք ի խնդիր արեգական։

Տարօրինա՛կ բան. ատաղը չի ճառագայթեր. չի ցոլացներ՝ ո՛չ մէկ մակերեւոյթի հանդիպելով։ Տաք չէ։ Ամպերն անցան. մեր մուշտակները թրջած են։

Վար իջնենք՝ լուսանկարներ առնելու համար։ Լաւագոյն միջոցն է այս՝ լաւ աշխարհացոյց մը ունենալու։ Ահաւասիկ աշտարակի մը վրայ ենք։ Սա ջինջ հայելի մը պէս երեւցածը լիճ մրն է։ Սա չփոթ կոյտը շէնքերու համախմբում մ'է, և սա մթին կտորն ալ հաւանաբար անտառ մ'է։

Բոլոր ատենք կ'անցնին արագ, նոր վերելք մը կը յարձակէ զմեզ, և մեր ուղեգիծը կանգ կ'առնէ մակարդակի մը վրայ զոր չեմ հասկնար։ Աչերս կը պղտորին, գլուխս կը ծանրանայ, քնանալու անպարտելի բաղձանք մը կը նուաճէ յաղթուած ուժս։ Տարօրինակ զգայնութիւն մը կ'ունենամ սրտիս մէջ, որ կարծես կը թուլնայ, կը նուազի։ Ընկերս արագ ակնարկ մը կը նետէ վրաս և ինձ կ'երկնցնէ ճերմակ փոքր ծրար մը մ'որուն մէջ ուտելիք կայ։ Կը խօսի, շրթունքները կը շարժին, բայց ձայնը չեմ լսեր։ Արտաքնունքս, հակառակ ճիգերուս, կը փակուին։ Բարձրութիւնը յաղթանակած է...։

* * *

Պէտք է երազեմ ...

Լուսաւոր ճամբու մը մէջ ենք հիմա. պիտի ուզէի մինչև իմ ատաղս երթալ, քանի որ մեզմէ իւրաքանչիւրն իրն ունի. բայց ո՞ւր է իմ ատաղս. ի՞նչպէս ճանչնալու է զայն ...։ Մաքնիսական ոյժ մը զմեզ կը քաշէ դէպ յամաստեղութիւն մը, որուն արբանեակներէն իւրաքանչիւրին վրայ, կ'ընդունմարեմ ծանօթ սիրելի դէմք մը։ Մայրիկս բազուկները կը կարկառէ ինձ, հայրիկս կը ժպտի ինձ. կը մտանանք։ Մե՛ն, ի՜նչ երջանկութիւն. ահա՛ ծնողական տունը. մեծ պարտէզն՝ իր գեղեցիկ ծառերով. ամենուրեք ծաղիկներ, պտուղներ, զիրգ անուշահոտութիւններ. Սիրելիներն ահա՛ ներս կը քաշեն. կը տեսնեմ ճիշդ իմ սենեակս, ճերմակ վարագոյրներս, պզտիկ մատենարանս, մինչև մեր գորշ կատուն որ կուգայ ինձ քսուրրտուելու։

— Տե՛ս, կ'ըսեն ինձ, սա մտի աստղերն մեր ծնողաց բնակարաններն են։ Հոն, զանոնք ամէնն ալ պիտի տեսնես. այնչա՛փ երջանիկ ենք մենք։ Ունինք ամէն ինչ որ կեանքը կ'ընէ այնպէս որպէս պարտի ըլլալ և զոր չունեցանք երկրի վրայ. ունինք ինչ որ հաճելի է մեզ. մեր ճաշակները գոհացում գտած են. չենք նեղուիր բնաւ. տիեզերքի մէջ հանդիսատ կը ճամբորդենք. ամենուրեք ուրախութիւն է. կ'ըմբռնենք երկրային գոյութեան գաղտնիքն ու պատճառը։

— Կրնա՞մ արդեօք ձեզ հետ մնալ ...

— Ո՛չ տակաւին. եւ դարձիր և եկուր, երբ ժամը հնչէ վարը՝ ուր կ'որոշուի, կը նշանակուի ժամանակը որ, այստեղ, չունի գոյութիւն։

. . . . . .

Վար կ'իջնենք մեղմիւ՝ չորցած տերեւի մը պէս. կը սաւառնինք. կը տեսնեմ երկրի խոշորնալը. վեր կը բարձրանայ դէպ ի մեզ։ Կը ճանչնամ Լուառը. Նանթը, Անժէրը, Եայլն։ Սիրտս հանդարտ է. ուրախութիւն մը խուժած է էութեանս մէջ. այս հեշտալի ճամբորդութիւնն վերջ գտած է։ Օդագնացութեան կրկէսը իջած ենք. կը գլորտկինք ...։ Մնաս բարով, գեղեցիկ երա՛զ։

Թրգմ. Ց. Գ. Փ.

ԱԶՔԻ ՄԷՋ մնած օտար նիւթերը հանելու համար, պէտք է ստորին արտեւանունքն անջատել աչքին գունդէն և այս կերպով ձեւացած խոռոչին մէջ ձգել կտաւատ (ֆիբեն թօխուտը) մը։ Պէտք է յետոյ աչքը գոցել։ Հունտը նախ գունդին կը փակի և անմիջապէս կը ծածկուի թանձր հոլով մը, որ իրեն թոյլ կուտայ ամէն կողմ դիւրութեամբ սահելու. քիչ յետոյ ներքին անկիւնէն դուրս կ'ելնէ բոլորովին կպչուն վիճակի մէջ։ Ի՞նչ դեր կը կատարէ կտաւատը աչքին մէջ, չենք գիտեր. սա միայն ստոյգ է որ աչքին մէջ մնածին պէս, ցաւը կ'անհետի։

ՏՈՒՆ ԴՊՐՈՑ ԵԿԵՂԵՑԻ

ՑԱՆՑԱՒՈՐ ՏՂԱՔ ՉԻ ԿԱՆ, ԱՅԼ ԴԺԲԱՂԴ ՏՂԱՔ ՄԻԱՑՆ

Եւ ի՞նչ է արդիօք մեր տղոց դժբաղդութիւնը։

— Առանց հսկողութեան՝ անոնց վայելած սանձարձակ ազատութիւնը։

Ահա՛ ցաւալի կէտը։

Մտիկ ընենք հետեւեալ ապացոյցները.

1) *Լը-Մէդր անուանով տասնը հինգ տարեկան տղայ մը իր տունը կը տանի տղեկ մը, կը խեղդէ զանի և կ'երթայ անձնատուր կ'ըլլայ ոստիկանութեան։ Բան առ բան հետեւեալ յայտարարութիւնը կ'ընէ ոստիկանին. « Վէպ չատ կարդացած եմ, և անոնցմէ մէկուն մէջ գտած եմ նկարագրութիւնը տեսարանի մը՝ համանման անոր զոր ի հանդէս բերի ես։ »*

(Ճառ Տիկին Հաւրի Բօպէրի, ընդդեմ պոռնկագրութեան, Հասարակաց ողովին մէջ խօսուած, էջ 167)։

2) *Ութ տարեկան աղջնակ մը կ'սպառնայ՝ դաշոյնի հարուածներով սպաննել իր մայրը։ Երբ կը յանգիմանուի, կը պատասխանէ. « Լաւ գիտես, մայրի՛կ, թէ պարոն մը մեր տունը գիրք մը մոռցած էր. անոր մէջ կար՝ գետնին տակ ապրող կին մը որ դաշոյն մը մխած էր մարդու մը սիրտը։ Ուզեցի անոր պէս ընել։*

(Նոյն ճառ, էջ 168)

3) *Ժիւլիի մէջ ահռելի ոճիր մը կը գործուի. երկու դեռահասակ հովիւներ հինգ հոգիէ բաղկացեալ ընտանիք մը կը կոտորեն։ Այս կանխահաս ոճրագործներն ամէն օր կը կարդային ոստիկանական լրագիրներ և վէպեր, որոնց մէկ ճոխ մթերքը կ'ելլէ անոնց քովէն։*

(Նոյն ճառ, էջ 169)

4) *Տասնը վեց տարեկան պզտիկ ծաղրարար մը սէր կուտայ ոճրային գրականութեան. մեծապէս կը հրապուրուի Կրէվէնի թանգարանին մէկ նկարատետրէն (album) որ կը ներկայացնէ ոճիրի մը պատմութիւնը, սկսեալ մարդասպանութենէն մինչև սպանիչին մահու պատիժին գործադրութիւնը, Իր կարգին, պատանի ծաղրարարը կը սպաննէ վարպետը և կը կողոպտէ զանի։*

5) *Վիէննացի պատանի մը ներկայ կ'ըլլայ փոքրիկ թատերգութեան մը, որուն մէջ ոճիր մը կը գտնուէր. թերթ մը թղթի վրայ ողբերգութեան այլազան դիմայեղումները կը ծանօթագրէ և, երբ տուն կը դառնայ, կին մը խեղդամահ կ'ընէ՝ հետեւելով կէտ առ կէտ թատրոնէն ծանօթագրած տուեալներուն։*

(Ճառ Տօքտ. Պէռնէյմի, ընդդեմ պոռնկագրութեան Հասարակաց ողովին մէջ խօսուած, 1912, էջ 170)։

6) *1910 ին, մարդ մը կը սպաննէ Էլիզա Վանսան անուանով կին մը, կը յափտէ դիակը, ծրարի մը մէջ կը դնէ և կը դիմէ դէպ ի Պիւդ-Շօմոն (ի Բարիզ)։*

« Բռնած միջոցիս, կը խոստովանի հարցաքննիչ պաշտօնէին, կը յիշէի պատմութիւնը Պօցարի փողոցի դիակին որուն վրայ խօսած հին ինծի՝ յարաճնի տղայ մը եղած միջոցիս։ Գացի, ծրարս դնելու նո՛յն տեղը. ինծի այնպէս կուզար թէ պարտաւոր էի հո՛ն դնել զայն։

(Տեղեկագիր Պ. Վիշէրի, տուած առ Հասարակաց ողովին ընդդեմ պոռնկագրութեան։)

7) *Հաւրի մէջ, հացագործ տղայ մը՝ ոստիկանական վէպերու ընթերցումով, պառաւ մուրացիկ մը կը սպաննէ, որպէսզի՝ իր գիրքերէն մէկուն մէջ պատմուած ոճրին պէս հատ մըն ալ ի՛նք գործած ըլլայ։*

8) *Անդրադանտեան Ընկերութեան մէկ պաշտօնեան, 17 տարեկան, լաւ ընտանիքի զաւակ և բարի վարուց տէր, նմանօրինակ ընթերցանութեան կուտայ ինքզինքը, և անոնց ազդեցութեանց տակ՝ կը փորձէ սպաննել ճարքորդ մը զանիկայ կողոպտելու համար։*

(Ճառ Պրն. Մուրաշի, ընդդեմ պոռնկագրութեան Հասարակաց ողովին մէջ խօսուած, էջ 178)։

9) *Շէրի Ոճրագատ ատեանին առջև կը բերուի 13 տարեկան տղայ մը, իր վարպետը՝ առանց որևէ պատճառի, սրէն պարանոցը բրած ըլլալուն համար։ Տեղւոյն վրայ ձերբակալուելով, յայտարարած է թէ կարդացած է նմանօրինակ ոճիր մը Լա Պէշ Ժիւլի բսուած վէպին մէջ, և ուզած է գործել այդ ոճիրին նման ոճիր մը։*

(Տիկ. Հաւրի Բօպէր, ՄԱՆԿ ՈՃԻՐՆԵՐ)։

10) *Գիւղակոն դպրոցի մը աշակերտները, ոճրապատում ընթերցումէ մը ներշնչուած՝, որ մը կը սկսին արաշական խաղերով զբօսնելու. փայտէ դաշոյններ կը շինեն և մարմնամարզութիւններ կ'ընեն « բաղքենի մը մնոցնելու »։*

(Վոշիւմ, 1911 Mars 12, նամակ Պրն. Տրշահէյի)։

* * *

Ուրեմն, տղոց վարքին գլխաւոր պատասխանատուն անոնց ծնողքն ու պաշտպաններն են, քանի որ՝ մեծ մասամբ՝ անոնցմէ՝ կախում ունի ընտրութիւնը միջավայրին որուն մէջ կ'ապրին անոնք։

Ցանցաւոր տղամ չի կան, այլ դժբաղդ տղամ միայն կան։

Հացէն եաք, առաջին պէտքը զոր ծնողք պարտաւոր են տալ իրենց զաւակաց, դաստիարակութիւնն է, այսինքն անոնց վրայ հսկելու, զանոնք առաջնորդելու հոգածութիւնն է։

Հսկել ընկերի, գրքի, զբօսանքի ընտրութեան։

Ըսէ՛ ինծի թէ որո՞ւ հետ կը տեսնուիս, ի՞նչ գրքեր կը կարդաս, և ես քեզի թէ ո՞վ ես դուն։

Նոյն բանաձեւը չէ՞ կարելի պատշաճեցնել նաև զբօսանքի համար։

Հսկել, առաջնորդել՝ դժուար է, արդարև, բայց, ներկայիս դժուարութիւնները խուսափելով, ծանր դժուարութեանց ու խոր վշտակրութեանց մատնած չի՞ պիտի ըլլան իրենց անձը ծնողք, ապագային, երբ տեսնեն իրենց զաւակաց մէջ արմատացած յոռի ունակութիւններ որոնք անողոքաբար կը քայքայեն անոնց մարմինը, նկարագիրը և ընտանեկան կեանքը միանգամայն։

Աւելի խոհեմ պիտի ըլլան ծնողք, եթէ յոժարին՝ խաղաղ առուին հունէն անցնիլ, և եթէ իրենք զիրենք չենթարկեն յորդահոսան գետին վտանգաւոր սահանքներուն։

Բայց տղան, ծնողքին և ընտանիքին միայն չի վերաբերիր, անիկա զաւակն է համայնքին։

Համայնքն ալ, հետեւաբար, ունի իր պարտականութեան բաժինը տղուն առաջնորդութեան եւ հսկողութեան գործին մէջ։

ՍԵՊՈՒՀ

24 Յուլիս 1927

ՀԱՒՆՈՑԻ ԽՆԱՄՔ

ՕԳՈՍՏՈՍԻ մէջ պէտք է ձեռքէ հանել բոլոր կռուազան աքաղաղի ձագերը, կրոուելու սովորութիւնը միւս ձագերուն փոխանցելէ առաջ։

Պէտք է, ամէնէն դեղեցիկ ձագերէն ընտրուած ապագայ արուագրիչներ՝ երբ երկու և կէս կամ երեք ամսու ըլլան՝ առանձնացնել վառեակներէն, և վառեակներու խումբին, կամ լաւ ևս, հաւերուն մէջ դնել՝ այն առեն միայն՝ երբ այլ ևս հասած են ծեծ չուտելու վիճակին։

Այս գործողութենէն առաջ, և անմիջապէս որ թուխսերը վերջանան, պէտք է ձեռքէ հանել տարիքոտ աքաղաղները։

ՍԱԳԻ ՁԱԳԵՐՆ ի՞նչպէս մեծցնել. — Սագերու և սագի ձագերու սնունդն առաւելապէս կը բաղկանայ կանաչեղէնէ զոր կը սիրեն քաղել արօտատեղիներէ։ Ուրիշ կերպով, սագերու սնունդը չատ սուղի կը նստի և արդիւնքն ալ նպաստաւոր չըլլար։

Ինչպէս բաղիկներու, սագիկներու սնունդին յատկացեալ խիւսերուն մէջ ալ կը մտնէ եղիմը (ըսբրղան օրու), բայց պէտք է տալ նաև կտրտուած խոտ մեծ քանակութեամբ, ամէն անգամ որ օդը չի ներեր սագերն արօտավայր տանելու։

վեղծ ոշմպիղմ վրկեսի յսվ նեսօ ոսժ ոչմսդ՝ վ եճոռ
՝մշեռս ԼԵՆԵՄԵՆ ՍՍԳՄՍՍ՝ ՝ԳՆԴՎՐ ԳՎՄՍՍ ՍՍԳՄ ՆԳԷ ՈՂՋ
ՈՄՍԿ ՍՍ՝ ՍՐ ԿՍՍԳՄ ՍՍՍ ԳՍԺԳՂՐ ԻՍԿՍՍԴՎՍ ԲՍՍԻ
ԳՎԵԿՍՍԳՎՍՍԿ ՍՎ՝ ՝ԼՎԻՄՎ, ԵԿԿՍՍԳՍՍՍՍ՝ ՝ԵՃՍԿ —
՝ՇՆՐ ՍՎ ՍՍԵԵ ՍԿ ՍՍՍՍՍ
ՈՄ ՎԼԴՍ ԳՎԺՍՓՍՓ ՍՍԿԳԵՍԿ ՍՍՍԳԿԵՍՍԿ ԳՎԿՍ
ՈՄՍՍԿ՝ ՂՇՍՍ ՍՍԳԳՎԺՍՍԵՍՍ ԳՍԿՍՍԵՍՍ՝ ՍՍՍ ՍՐ
ՍՍԳԿՍՍՍՍՍՍ ԵՂՍՍՍ ՍՍՍԵԿՍՍՍՍԿ ԳՍԳՍՍԵՍՍ՝ ՇՆՍՍ
ՀԼԴՍԴ ԳՎԳԼԴՍԿՍՍՍՍՍՍ ԳՍԿՍՍԵՍՍ՝ ՇՆՍՍ
ՍՍԳԳՎԺՍՍՍԿՍՍ ԳՍԿՍՍԵՍՍ՝ ՇՆՍՍ ՍՍԳԳՎԺՍՍՍԿՍՍ
ՍՍ՝ ՇՆՍՍ ՍՍԳԳՎԺՍՍՍԿ

համար կ'ուզեմ բան մ'ընել, երիտասա՛րդ։ Մեր Պէարնի բարեկամները սովորաբար հարուստ չեն, և կը կասկածիմ որ գաւառէն մեկնելէս ի վեր գործերը չատ կերպարանափոխ եղած ըլլան այն տեղ։ Ուստի չեմ կարծեր թէ ապրելու համար ձեր հետ աւելի դրամ ըլլած ըլլա՛ք։

Տ'Արդանեան գլուխը վեր բարձրացուց հպարտութեամբ, ըսել ուզելով թէ ո՛չ ոքէ ողորմութիւն կը խնդրէ։

— Շա՛տ լաւ, երիտասարդ, շատ լաւ, շարունակեց Դրէվիլ, կը հաճնամ այդ կերպերը։ Գրպանիս մէջ չորս սկուդ ունի երբ Բարիզ եկայ, և հիմա պատրաստ եմ կուտալու անոր հետ որ կարենայ ըսել թէ Լուվրը չեմ կարող գնել։

Տ'Արդանեանի համարձակութիւնն աւելցաւ. իր ձին ծախելովը՝ չորս սկուդ աւելի կ'ունենայ քան ինչ որ Պ. տը Դրէվիլ ունէր իր ասպարէզն սկսած ատեն։

— Ուստի, կ'ըսէի, թէ պէտք է լաւ պահէք ձեր դրամը, ո՛րչափ ալ մեծ ըլլայ, բայց նաև պարտաւոր էք կատարելագործուիլ այն մարզանքներուն մէջ որ ազնուականի մը կը վայելեն։ Այսօր իսկ նամակ մը պիտի գրեմ արքունի ճեմարանի տնօրէնին, և վաղն իսկ ձեզ պիտի ընդունի առանց որ և է հատուցման։ Մի՛ մերժէք այս պզտիկ վայելքը։ Մեր ամենէն հարուստ ազնուականներն անգամ այս չնորհը կը խնդրեն երբեմն, առանց զայն կարենալ ստանալու։ Զիավարժութիւն, սուսերախաղութիւն և պար պիտի սովրիք. լաւ բարեկամներ պիտի ունենաք հոն, և ատեն ատեն ինձ պիտի այցելէք և ձեր վիճակն յայտնէք, և ես ալ պիտի նայիմ թէ ձեզի համար բան մը կրնա՞մ ընել։

խանէ անշուշտ որ սոսկում կը զգայ Նորին բարձրութենէն։

Սակայն՝ Դրէվիլի ակնկալութեան հակառակ՝ տ'Արդանեան պատասխան տուաւ յեսին ծայր միամտութեամբ։

— Պարոն, ես ալ ճիշդ մի և նոյն զգացումներով Բարիզ կուգամ։ Հայրս պատուիրեց ինձ որ մինակ թագաւորին, Պ. կարտինալին և ձեր խօսքէն դուրս չելլեմ, վասն զի երեքնիդ ալ Ֆրանսայի առաջին մարդիկը կը համարի։

Տ'Արդանեան առաջին երկու անուններուն Պ. տը Դրէվիլի անունն ալ կ'աւելցնէր, ինչպէս կը տեսնուի. բայց կը մտածէր որ այս կցում ոչ ոքի կը վնասէր։

— Այսպէս, Պ. կարտինալին համար մեծ պատկառանք, և իր գործերուն համար մեծ յարգանք ունիմ, շարունակեց նա։ Զափազանց ուրախ եմ, պարոն, եթէ ձեր ըսածին պէս ինձ հետ անկեղծութեամբ կը խօսիք. վասն զի այն ատեն պատիւ պիտի ընէք ինձ ճաշակի մեր այս նմանութիւնը գնահատել, բայց եթէ թեթև կասկած մ'ունեցաք ինձ, որ բնական է, կը զգամ որ ճշմարտութիւնն ըսելով՝ կը վնասուիմ, բայց փոյթ չէ, դուք չպիտի դադրիք զիս գնահատելէ, բան մը որուն աւագ կարեւորութիւնը կ'ընծայեմ աշխարհի մէջ։

Պ. տը Դրէվիլ խիստ զարմացաւ։ Այսքան խորագիտութիւն ու անկեղծութիւն հիացուցիչ կը պատճառէին իրեն, բայց կասկածները բոլորովին չէին փարատեր. այս երիտասարդը ո՛րքան զերազանց էր ուրիշ երիտասարդներէ, նոյնքան սոսկալի էր, եթէ կը սխալէր։ Եւ սակայն տ'Արդանեանի ձեւերը սեղմեց և բաւ.

համար կ'ուզեմ բան մ'ընել, երիտասա՛րդ։ Մեր Պէարնի բարեկամները սովորաբար հարուստ չեն, և կը կասկածիմ որ գաւառէն մեկնելէս ի վեր գործերը չատ կերպարանափոխ եղած ըլլան այն տեղ։ Ուստի չեմ կարծեր թէ ապրելու համար ձեր հետ աւելի դրամ ըլլած ըլլա՛ք։

Տ'Արդանեան գլուխը վեր բարձրացուց հպարտութեամբ, ըսել ուզելով թէ ո՛չ ոքէ ողորմութիւն կը խնդրէ։

— Շա՛տ լաւ, երիտասարդ, շատ լաւ, շարունակեց Դրէվիլ, կը հաճնամ այդ կերպերը։ Գրպանիս մէջ չորս սկուդ ունի երբ Բարիզ եկայ, և հիմա պատրաստ եմ կուտալու անոր հետ որ կարենայ ըսել թէ Լուվրը չեմ կարող գնել։

Տ'Արդանեանի համարձակութիւնն աւելցաւ. իր ձին ծախելովը՝ չորս սկուդ աւելի կ'ունենայ քան ինչ որ Պ. տը Դրէվիլ ունէր իր ասպարէզն սկսած ատեն։

— Ուստի, կ'ըսէի, թէ պէտք է լաւ պահէք ձեր դրամը, ո՛րչափ ալ մեծ ըլլայ, բայց նաև պարտաւոր էք կատարելագործուիլ այն մարզանքներուն մէջ որ ազնուականի մը կը վայելեն։ Այսօր իսկ նամակ մը պիտի գրեմ արքունի ճեմարանի տնօրէնին, և վաղն իսկ ձեզ պիտի ընդունի առանց որ և է հատուցման։ Մի՛ մերժէք այս պզտիկ վայելքը։ Մեր ամենէն հարուստ ազնուականներն անգամ այս չնորհը կը խնդրեն երբեմն, առանց զայն կարենալ ստանալու։ Զիավարժութիւն, սուսերախաղութիւն և պար պիտի սովրիք. լաւ բարեկամներ պիտի ունենաք հոն, և ատեն ատեն ինձ պիտի այցելէք և ձեր վիճակն յայտնէք, և ես ալ պիտի նայիմ թէ ձեզի համար բան մը կրնա՞մ ընել։

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՄԵԾ ԺՈՂՈՎ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ

Քրիստոնեայ եկեղեցիներու Տիեզերական մեծ ժողովը տեղի ունեցաւ Լօզանի մէջ ամսոյս 3 ին։ Մասնակցեցան տիեզերքի բոլոր Եկեղեցիները, բաց ի Հռոմէականէն, որուն պետը չէր պատասխանած հրաւէրին։ Լօզանի մայր եկեղեցին լեցուած էր աշխարհի ամէն կողմերէն եկած հազարաւոր պատուիրակներով և լրագրողներով։ Կը նախագահէր Նիւ Եօրքի եպիս. Տ. Պրէդ։ Հայ եկեղեցին կը ներկայացնէր Մանչէսթրի Հոդեւոր Հովիւ Տ. Ղեւոնդ եպիս. Դուրեան։ Պատուիրակները, աղօթքէ մը վերջ, կ'արտասանեն Նիկիոյ հանդանակը, իւրաքանչիւրն իր լեզուով, «Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ . . .»։ Երգերով և աղօթքներով՝ պաշտամունքը կը շարունակուի, երգեհոնը կը հնչէ, և հուսկ յետոյ՝ աշխարհի գրեթէ բոլոր լեզուներով կ'արտասանուի «Հայր մեր»ը։ Այս ժողով առաջին տիեզերական մեծ ժողովն է որ կը գումարուի 4րդ դարէն ի վեր։

Կրօնական արարողութիւններէն յետոյ, պատուիրակները կ'երթան Լօզանի համալսարանին շէնքը, ուր ժողովին առաջին նիստը տեղի կ'ունենայ և կ'արտասանուին ճառեր և ուղերձներ։ Նիստերը պիտի շարունակուին մինչև Օգոստ. 21։ Ժողովին նպատակն է՝ հասկացողութիւն մը յառաջ բերել քրիստոնէական եկեղեցիներու միութեան շուրջ, հիմնուած Նիկիոյ հանդանակին վրայ, որ կը բացատրէ քրիստոնէական վարդապետութիւնը։

ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆ

Ֆրանսայի մէջ գիւղացի կին մը (Օմիգուր գիւղէն) կ'ապրի 102 տարեկան, կատարելապէս քաջառողջ և կը շարունակէ մշակել իր փոքրիկ պարտէզը։ Լաւ ախորժակ ունի, և անաւասիկ իր ամենօրեայ ուտելիքը՝ երկայն տարիներէ ի վեր.

Նախաճաշիկ. կաթով սուրճ։

Կէս օրուան ճաշ. պտուկի մէջ եփած միս եւ մսի ջուր։

Ճաշ. Հաւկիթ և կաթով սուրճ։

ՎԱՀՐԱՄ ՍԻՒԶԷՆԻՃԵԱՆ

Գնում, Վաճառում եւ Նորոգութիւն Իսֆիսուարժերու (Opo)

Մի՛ գներ Opo, մի՛ ծախեր Opoդ, առանց նախապէս մեզ տեսնելու, եթէ կ'ուզես չահաւոր գործ կատարել։ — Վրճարման դիւրութիւններ։ — Դրախտ պատրաստ զանազան քամիոններ։

Հասցէ. — Բերա, Բանկալդի Համամ, Սապսի փողոց, Թիւ 1։

ԾԱԽԻՒ ԳԵՏԻՆ

Բերա, Բանկալ'ի, Պիլէկիկճի փողոց, Պարուլթհանէ ճատտէսի, ծախու գետին մը կայ՝ 8 կանգուն երեսով, և 26 ու կէս կանգուն խորութիւնով։ Դիմել Հայ Գիէ, Զինիլի բաղնիքին կից մանիֆամիւրաճի Յովհաննէս էֆէնտիին։

* * *

Ֆէրիգիւղ, Գուլյուլու Պաղ Էօն ճատտէսի, 282 կանգուն գետին, որ ունի 7 կանգուն երես և 40 կանգուն խորութիւն, ծախու է։ Դիմել Փալադաշեան Գրատուն, Բերա, Գալաթիստան Փողոց, Թիւ 171։

նիքը շատ ատենէ ի վեր հողին տակ են։ Միայն այս աղջիկը մնացած է, որ անոր թոռն է. բոլորովին որբ է և իրրև աղջիկս կը խնամէ զիս։ Այն ծերունին ես եմ որուն համար ջուր կը տանէր, երբ քեզ հանդիպեցաւ։

ՍԱՐԳԻՍԵԱՆ. — Միթէ՞։ Ուրեմն, հոգիս, դու մեր բարի ածխագործին թոռն ես և իմ հօրս բարեկամուհին։ Ինչ որ դու հօրս համար ըրած ես, ամէնուն փոխարէնը ես կը հատուցանեմ քեզ։ Այս վայրկեանէն դուն ալ իմ աղջիկը պիտի ըլլաս, մեզի հետ պիտի գաս, և իմ խնամքս պիտի վայելես։

ՄԱՐԻԱՄ (ձեռքը համբուրելով). — Աստուած թո՛ղ հատուցանէ ձեր ողորմածութեան փոխարէնը։ Զգիտեմ թէ ի՞նչպէս յայտնեմ ձեզ շնորհակալութիւնս։

ՍԱՐԳՍԵԱՆ. — Աստուծոյ շնորհակալ եղի՛ր։ Դուն կը տեսնես որ Աստուած չի մոռնար և կը վարձատրէ իրեն անունով տրուած կաթիլ մը ջուրն անգամ . . . հայրի՛կ, ես և զաւակներս կը փափագինք տեսնել ձեր խրճիթը որ մինձ համար չքեղ ապարանքներէ աւելի թանկագին է։ Միհրա՛ն, գիւղ գնա՛, մեր ծառայները կտիր. անոնք կառագործին հետ կ'աշխատին. ըսէ՛ անոնց որ պանդոկէն ճաշ և մեր լաւագոյն գինիները բերեն մեծ հայրիկին խրճիթը։ Մենք ամենքս ա հոն պիտի կատարենք այս երջանիկ օրուան տօնախմբութիւնը, և այնուհետև ճամբայ պիտի ելնենք։

ՄԱՐԻԱՄ. — Ես կ'երթամ գիւղ. ճամբայնեերը ես աղէկ գիտեմ։ Միհրանին տեղ ես կը կատարեմ ձեր պատուէրը. ան թո՛ղ հոս մնայ։

ԵՒԳԻՆԷ (կեցցելով Մարիամը). — Կեցցի՛ր, մէկտեղ կ'երթանք։

ԱՇՈՏ (ձեռքը կողով մը ելակ բռնած). — Այսօր ո՛չ մէկն ուզեց ինձմէ ելակ առնել։ Հայրս լացաւ և հեռացաւ։ Աղքատն այնչափ վախցաւ ելակէն որ քիչ մնաց ուշաթափ գետին իյնար։ Կը յուսամ որ մեծ հայրիկս կ'ընդունի այս նուէրս։ Ա՛ռ, սիրելի մեծ հայրս։

ՍԱՐԳՍԵԱՆ. — Այս միւնոյն տեղը, քառասուն տարի առաջ, ես էի որ ձեզ համար ելակ կը ժողվէի, և հիմա ձեր թոռն է որ ձեզ կը մատուցանէ կողով մը ելակը։

ՍԱՐԳԻՍ. — Շնորհակալ եմ, զաւա՛կս։ Մեծդ Աստուած, որ միւնոյն ժամանակ ստեղծեցիր համեստ ելակները և հպարտ կաղնին, Դո՛ւ՝ որուն անսպառ բարութիւնը հաւասարապէս կը տարածուի բոլոր արարածներու վրայ, Դու մեծ գործ կատարեցիր այս կողով մը ելակի միջոցաւ, ո-

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄԻԱՄՏՈՒԹԻՒՆ

Գիշեր մրն էր։ Երկնային պսպղուն աստղերուն մէջէն լուսինն ալ իր կարգին կը լուսաւորէր ցամաքն ու ծովը, և այդ գիշեր՝ իրր բնութեան ամէն մէկ չարժ ու ձեւին հիացող՝ ես և մէկ քանի ընկերներս, սքանչացած գիշերուան այդ պայծառութեան հանդէպ, կը դիտերէինք Վսփորի ափերը դիտելով լուսնին և երկնային աստղերուն լոյսին ցոլացումը։ Ափերուն ուզելով անյաղթելի վայելել սոյն հաճոյքը, որոշեցինք նաւակ մը վարձել և Վոսփորի ալեակներուն հետ մեր սիրայիր յարաբերութիւններն աւելի մտերմացնել։

Ո՜հ, Աստուած իմ, մարդ երբ կը մնա՝ կուսի և մտամփոփ կը դիտէ բնութեան հրաշալիքները, կարելի չէ որ չի հիանայ, չի՛ զարմանայ այդ ամէն մէկ ստեղծագործութիւններուն վրայ, որոնց տէրը և հրամայողը միայն և մի միայն Արարիչն է։

Լուսնին չողչողուն փայլին տակ, երբ կը թիավարէինք, վայելելով դիշերուան մեղմ սիւգին ազդեցութիւնը, բիւր երազանքներու հետ միասին, չէինք ուզեր որ լոյսը ծագէր և մեր հաճոյքն ալ վերջ գտնէր ...։ Ցանկարծ հեռուէն լուսեցան ատրճանակի և թմփուկի ձայներ, որոնք պահ մը մեր հանգիստը ու զուարճութիւնը խանգարեցին. բայց երբ յետոյ իրարու հետ եղանք, աւելի հաճոյալի ժամանց մը եղաւ մեզ համար։

Լուսնին խաւարումը տեղի կ'ունենար մեր գլխուն վերեւ, ինչ որ մեզ զգոյի եղաւ իր ցոլքերուն անցեալացումովը մեր աչքերուն առջեւէն։

Արեւելեան հին քաղաքակրթութեան մէջ ընդունուած է որ, լուսնին խաւարման պատճառը, խոչոր արջ մրն է որ իր երկու հսկայական թաթերով կը բռնէ զայն ու չի ձգեր։ Եւ ահա այդ գիշեր ալ որ լուսինը խաւարած էր, ըստ հին քաղաքակրթութեան սովորութեանց՝ կարգ մը աւանդապաշտներ հրազէն կը պարպէին և աղմուկ կը յարուցանէին, փրկելու համար խեղճ լուսինը այդ վատ գազանին ձեռքերէն և վայելելու համար անոր գեղեցիկ լոյսն ու փայլը։

Ո՜վ մարդկային միամտութիւն,
Դեռ ինչքո՞ր ընել չես տար դուն ...։

ԳՐ. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԵՂՈՒԻ Գասարդիպի բաժանորդներէն կը խնդրուի իրենց բաժնեգինը յանձնել Օր. Արմենուհի Ֆէրհատեանի, Հաճի Շիւբրի փողոց, թիւ 36, Այաթրիանատա Ցունաց եկեղեցիին դիմաց։

ԾԱԽՈՒ ՏՈՒՆ
ԲԵՐԱ, ՊԱՐԵԱՄ ՓՈՂՈՑ
Բարաշէն 11 սենեակ, Չրամբար, Հոր, ելեկտրականութիւն, լոդարան, եւայլն։ Դիմել Փալատաշեան Գրատուն։

ՇԱԲԹՈՒԱՆ ՕՐԱՑՈՅՑԸ

ՕԳՈՍՏ. 11 — 17

11	Եշ.	Դ. or պնց. Ս. Ա.ծ.ածնի.
12	Ուր.	Ե. » » » Լր. Լս. ժամ 11. rոպէ 58.
13	Շբ.	Տօն Շողակաթի Սբ. Էջմիածնի pus տեսլեան Ս. Գր. Լուս. մեռոյ։
14	✠Կիր.	Վերափոխ. Ա. Աստուածածնի.
15	✠Բշ.	Բ. or Վերափոխ. (Մեռելոց). Յն. եւ Նր. Վերափ. Ս. Ա.ծ.նի։
16	Գշ.	Գ. or Վերափոխմ.
17	Դշ.	Դ. or »

ՏՊԱԳՐ Յ. Գ. ՓԱԼԱԳԱՆԵԱՆ

բուն վրայ մարդիկ ընդհանրապէս շատ քիչ ուշադրութիւն կը դարձնեն։ Ի՜նչ մեծ յուսահատութեան մէջ ինկայ ես՝ երբ զաւակէս զրկուեցայ։ Ո՜րչափ արցունք թափած է անտառի մէջ ձգուած զաւակս, և ո՜րչափ չարչարուեցաւ անոր խեղճ եղբայրը։ Իսկ հիմա որչա՜փ ուրախ և երջանիկ ենք։ Մեր թշուառութեան օրերուն մէջ, այս երջանկութիւնը զո՛ւն կը պատրաստէիր մեզ։ Սիրոս անսահման գոհութեամբ և երախտագիտութեամբ լեցուած է Քեզի նկատմամբ. ո՛վ Ամենագութ Աստուած, Դու որ միակերպ կը խնամես և կը մխիթարես երիտասարդ իշխանագունը՝ հոյակապ մայրաքաղաքին շքեղ ապարանքին մէջ, և թշուառ ծերունին՝ անտառին մէջ անկիւնը խեղճուկ խրճիթին մէջ։ Ամէն ժամ օրհնենք զՔեզ, բարեգութ Տէ՛ր, և բարձրացունենք սուրբ անունդ։ Աստուած միշտ մօտ է սրտով տառապողներուն։ Նա կեանք կուտայ խոնարհներուն, նեղութենէ կը փրկէ իր ծառան. մեր ամենուս յոյսը և փրկութիւնն է Ան։

(Զոհած՝ ամենքը միասին կ'երգեն, երգէն յետոյ վարագոյրը կ'իջնի։)

ՎԵՐՋ

ուած նորէն կ'ուրախացնէ զանիկայ։ Աստուած իր նպատակին հասնելու համար, հազարաւոր միջոցներ ի գործ կը դնէ։ Ի՜նչ միջոցով որ գըժբաղդութեան մէջ ինկած էինք, ահա՛ ճիշդ նոյն միջոցով դարձեալ երջանիկ ըրաւ զմեզ, այսինքն կողով մը ելակի միջոցով։

ՍԱՐԳՍԵԱՆ. — Այո՛, Աստուած ամէն բան դէպ ի բարին ուղղեց. մեզ կը մնայ միայն ուրախանալ։ Բայց, հայրիկ, պէտք է ճամբու պատրաստութիւն տեսնէք. գուք ալ, սիրելի եղբայր, պատրաստուեցէք որ ինձ հետ միասին ճամբորդէք։

ՄԱՐԻԱՄ (այս վերջին խօսքերը լսելով, ծերունի Սարգսին կը մօտենայ եւ լալով կ'ըսէ). — Ո՜հ, բարի մեծ հա՛յրս, մի՛ երթաք, զիս առանձին մի՛ ձգէք. մեծ հա՛յրս, ես զիս նայող մէկը չունիմ հոս։

ՍԱՐԳՍԵԱՆ. — Ա՜, այս այն պզտիկ օրիորդն է որ ջուր տուաւ ինձ խմելու։ Ո՞վ է աս։ Ի՞նչ օգնութիւն կրնամ ընել անոր։

ՍԱՐԳԻՍ. — Զաւա՛կս, գուն անշուշտ կը յիշես մեր դրացի հին բարեկամը, բարի Յակոբը, որ ածխագործ էր հո՛ն։ Դուն շատ անգամ անոր խրճիթը կ'երթայիր, և անիկայ միշտ խնձոր կամ հաց կուտար քեզ։ Անիկայ և իր ամբողջ ընտա-